

ներու ուղիներ փնտրում: Խեչոյանը Արցախյան պատերազմ տեսած իր սերնդակիցների և անկախության անցումային փուլը հաղթահարած կրտսեր գրչակիցների հետ գրականության մեջ էքզիստենցիալիստական տրամադրությունների մի նոր երակ է բացում, որի տիպիկ արտահայտությունն է այս վեպը:

Բանալի բառերը` էքզիստենցիալիզմ, միայնություն, անմեղություն, մեղք, Ադամ, արքետիպ, առասպել:

Резюме

Рузанна Восканян

Адам, как архетип одиночества и невинности в романе

Л. Хечояна "Черная книга, тяжелый жук"

Данная статья посвящена анализу двух важных положений экзистенциализма: одиночества и чувства вины, в романе Левона Хечояна "Черная книга, тяжелый жук". Автор статьи рассматривает Адама в качестве архетипа греховности, невинности и одиночества. Проводится параллель между эстетикой Хечояна и эстетикой экзистенциализма.

Summary

Ruzanna Voskanyan

Adam as Archetypal of Loneliness and Innocence in L. Khechoyan's

Novel «Black Book, Heary Beetle»

This article explores two important provisions of existentialism - loneliness and guilt in the novel of Levon Khechoyan "Black Book, Heavy Beetle." The author of article considers Adam as the archetype of sin, innocence and loneliness. Parallels are shown between aesthetics of Khechoyan and existentialism.

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Բ.Գ.Դ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԱԳՈՐԾԸ

Վերջերս հոդվածումս մեջբերում անելու համար բացեցի Բորիս Պաստերնակի բանաստեղծությունների հատորը, գտա ինձ անհրաժեշտ տողերը, բնականաբար աչքի անցկացրի ևս մի երկու բանաստեղծություն և գիրքը չկարողացա ցած դնել: Կարդում էի ու հոգիս հրձվում էր պոեզիայի սիրով: Հասկացա, թե ինչ վիթխարի երևույթի հետ գործ ունեմ: Անտարակույս, Բլոկից հետո եկած ոուս պոետներից Պաստերնակն ամենաուժեղն է: Նա գալիս է այն ակունքից, որի անունն է Պուշկին, ապա Տյուտչև, Ֆետ, Բլոկ:

Հավատարմություն պոեզիայի դասականությանը` հանգավորման բյուրեղյա մաքրություն, սակայն պետք է ընդգծել, որ Պաստերնակի պոեզիայի համար հանգավորումը, բանաստեղծության տեխնիկան չի խաղում առաջատար դերը, առաջնայինն այստեղ ասելիքը, միտքն է: Հեղինակի հոգեվիճակի բացահայտումը, նրա բարդ խոհերի արտացոլումը խոսքի արվեստի միջոցով: Պաստերնակն ունի իր յուրահատուկ ձեռագիրը, բառերի իր զինանոցը, պատկերման իր առանձնահատկությունը, երբ ոչ թե ներկայացնում է առարկայի պատկերը, այլ առարկայի էությունն է բացահայտում, ուր յուրաքանչյուր խոսքն ունի իր արժեքը: Նա առավել գոյականի և բայի վրա է իջեցնում բանաստեղծության հիմնական ծանրությունը: Եվ յուրաքանչյուր գոյականն ունի իր արժեքը, յուրաքանչյուր բայ գիտե իր անելիքը: Պաստերնակի մոտ քիչ կհանդիպեք ածականների, անգամ եթե դրանց կարիքն զգացվում է, նա այն հմտորեն շրջանցում է, զորակոչելով հենց ածական դարձած իր պատկերը: Պատկերաստեղծման մեծ վարպետ է Պաստերնակը: Վերջին հաշվով, պոեզիան խոսքի, բառի միջոցով արվեստ ստեղծելու վարպետություն է: Եվ ինչպես յուրաքանչյուր պատկեր իր տեղում կարծես մարդու հոգեկան աշխարհի բացահայտման բանալի է, այնպես էլ նրա յուրաքանչյուր բանաստեղծությունը, բանաստեղծական տողը հեղինակի կերպարի մի մանրակերտն է, նրա կենսագրության կարևոր մի շտրիխ: Բանաստեղծի արվեստը հսկա-

յական լարվածության տակ գործող ուժակուտակիչ է, որի յուրաքանչ-յուր կայծը մի հրաշալիք է ստեղծում:

Յուրաքանչյուր ընթերցող ունենում է իր ընթերցած հեղինակի առավել կամ պակաս սիրելի շրջանը, գործը, Պաստեռնակին ընթերցելիս ինձ համար առավել հարազատ հնչեցին 1950-ական թվականների բանաստեղծությունները: Հենց 50-ական թվականները դարձան նրա առանց այն էլ ոչ անամպ կյանքի ծանրագույն շրջանը: Իր «Դոկտոր Ժիվագո» հանձարեղ վեպի համար (որն առաջին անգամ տպագրվեց Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում) Պաստեռնակը 1958 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: Սակայն Սովետական Միության գրողական միության պահանջարկով, կրեմլյան նոր առաջնորդ, նախկին խոզապահ, ազգությամբ ուկրաինացի Նիկիտա Խրուշչովը Պաստեռնակին հեռացրեց ԽՍՀՄ գրողների միության շարքերից: Խրուշչովը Պաստեռնակին կանգնեցրեց մի դրամատիկ ընտրության առջև. կամ ընդունում եք Նոբելյան մրցանակը և վտարվում Ռուսաստանից, կամ հրաժարվում եք մրցանակից և շարունակում ապրել հայրենիքում: Եվ պետական բյուրոկրատական մեքենան իր ողջ ուժով հարձակման անցավ բանաստեղծի վրա (գործարանային միտինգներ, կոլխոզային ժողովներ, առանձին անվանի մշակույթի գործիչների վրդովված նամակներ, պարբերական մամուլի հարյուրավոր հարձակողական հոդվածներ): Ըստ երևույթին շատերը կարոտել էին ստալինյան ժամանակներին և հիմա իրենց հերսը թափում էին Պաստեռնակի գլխին: Եվ Պաստեռնակը ձակատագրական որոշում կայացրեց. հրաժարվել Նոբելյան մրցանակից և մնալ հայրենիքում: Եւ գրել էր նախկին խոզապահին. «Չկա ինձ համար ավելի մեծ պատիժ, քան լքել Ռուսաստանը»:

Ուրեմն մնալ և միայնակ ձակատ տալ մի ողջ երկրի բռնատիրական համակարգին: Ես սա համարում եմ և՛ գրողական, և՛ մարդկային մեծագույն սխրանք: Եվ չնայած այդ հրեշային հալածանքին, բանաստեղծը չկտրվեց, զղջման կամ նահանջի ոչ մի բառ մենք նրանից չլսեցինք: Եւ մնաց կանգուն, իր երգած «պերեդելկինյան լորենու» նման: Ապացույցը՝ 50-ական թվականների նրա պոեզիան, նրա «Նոբելյան մրցանակ» բանաստեղծությունը: 1958 թ. հոկտեմբերի 24-ին Պաստեռնակին Ծվեդական ակադեմիան պարզևատրեց Նոբելյան մրցանակով և ուղիղ մեկուկես տարի անց, 1960 թվականի մայիսի 30-ին բանաստեղծը վախճանվեց իր սիրելի Պերեդելկինոյում: Իսկ դուք ասում եք՝ «Չնհալ»... Այո, նա նախընտրեց ապրել, տառապել և մահ-

կանացուն կնքել իր հայրենիքում, քան ստանալ մեկ միլիոն դոլար և անհոգ ապրել «ուրիշ ափերում» (Նաբոկովի խոսքն է):

Ինչ խոսք, որ Բորիս Պաստեռնակի բոլոր ժամանակակիցներն ունեին իրենց բաժին մեղքը նրա կյանքից հեռանալու հարցում: Գրական բազմաթիվ էմիսարներ՝ Սուրկով, Ֆեդին, Մարկով, Միխալկով, համախոսական նամակներ էին ստորագրում՝ ուղղված Խրուշչովին, որ Պաստեռնակին իր վեպի համար պետք է ձերբակալել: Իսկ Ժողովրդի լայն զանգվածները ողջ երկրով մեկ մեղադրական միտինգներ էին կազմակերպում դասականի դեմ: Եվ զավեշտն այն էր, որ ՍՍՀՄ-ում «Դոկտոր Ժիվագոն» չէր տպագրվել, և մարդիկ խոսում էին վեպի դեմ, որը նույնիսկ չէին կարդացել: Պաստեռնակի մահվան բոթը տպագրվեց միայն «Լիտերատուրնայա գազետա» թերթում, ուր գրված էր՝ մահացել է ՍՍՀՄ Լիտֆոնդի անդամ Բորիս Պաստեռնակը: Եվ վերջին հրաժեշտը կազմակերպվեց ոչ թե Գրողների միության շենքից, այլ Պերեդելկինոյի նրա առանձնատնից: Եվ նա հողին հանձնվեց Պերեդելկինոյի գյուղական գերեզմանոցում:

* * *

Բորիս Պաստեռնակը նաև հանձարեղ թարգմանիչ էր: Ոչ ոք այդպես լավ, հմտորեն ու կատարյալ չի թարգմանել Շեքսպիրին ռուսերեն, ինչպես Պաստեռնակը: Եւ թարգմանել է Շեքսպիրի բոլոր հայտնի ողբերգությունները՝ «Համլետ», «Լիր Արքա», «Ռոմեո և Ջուլիետ», «Օթելլո», «Մակբեթ», կատարել տիտանական աշխատանք: Ռուսների համար նա, կարելի է ասել, կատարեց նույն դերը, ինչ Հովհաննես Խան-Մասեհյանը հայերիս համար: Դրանով իսկ կատարեց նաև հսկայական լուսավորչական գործ, նա ի գորու եղավ իր բանաստեղծական տաղանդի միջոցով ոչ թե թարգմանել շեքսպիրյան գործերը, այլ ռուսերենով ստեղծել Շեքսպիրի բնագրին հավասարագոր եզակի գործեր, ռուս ընթերցողի համար Շեքսպիրին բացահայտեց իր ողջ գեղեցկությամբ և ուժով:

1938 թվականին Պաստեռնակը մեծ բեմադրիչ Մեյերհոլդի խնդրանքով սկսում է թարգմանել Շեքսպիրի «Համլետը»: Այդ գործի թարգմանության վերաբերյալ նա գրում է իր հորը՝ Լեոնիդ Պաստեռնակին. «Ինձ համար այդ աշխատանքը կատարյալ փրկություն էր շատ բաներից: Ես հասա այն նպատակին, որ դրել էի իմ առջև: Առանց այդ աշխատանքի ես կգժվեի: Ես թարգմանում եմ մտքերը, իրադարձությունները, բնագիրը՝ էջ առ էջ, այլ ոչ թե առանձին բառեր

և տողեր: Թարգմանությունը հնարավորին չափ պարզ է, հալած յուղի պես, այն հասկանալի է առաջին լսումից և բնական է» (1940 թ., 14 փետրվարի):

Մի այլ առիթով թարգմանական արվեստի մասին նա գրում է. «Թարգմանությունը պետք է հորդի թարգմանչից, ով բնագրի ազդեցությունը վերապրել է շատ ավելի առաջ, քան սկսել է իր աշխատանքը: Այն պետք է լինի բնագրի պտուղը և նրա պատմական հետևանքը» (Բ. Պաստեռնակ, «Թարգմանչի գրառումներ», տե՛ս Բ. Պաստեռնակ, Երկերի լիակատար ժողովածու 5 հատորով, Մոսկվա, 1989, հ. 2, էջ 645-646):

Պաստեռնակը օտար անուն չէր Իսահակյան ընտանիքի համար: Մինչ հեղափոխությունը Իսահակյանը և Պաստեռնակը ծանոթ չեն եղել: Նրանք ծանոթացել են 1935 թ. ամռանը Փարիզում, Առաջին միջազգային հակաֆաշիստական կոնգրեսի օրերին: Խոսքը տանք ականատեսին՝ Վարպետի որդի Վիգեն Իսահակյանին. «Մյուս օրը դարձյալ «Մյուստուալիտում» ենք: Խորհրդային պատվիրակությունը երևաց: Նրանք մշտապես միասին և կազմակերպված շարքով էին գալիս: Նրանց միջից ինձ շատ էր գրավել և հետաքրքրել Բորիս Պաստեռնակը: Նա ուրիշներին էլ էր շատ հետաքրքրել: Կարծես թե նրա անձից մի լույս էր ճառագում:

Բարձրահասակ էր, թուխ:

Կռահելով իմ ցանկությունը, Լևոն Մուսինյանը՝ կինոտեսաբանը, ծանոթացրեց ինձ Պաստեռնակի հետ, ասելով. «Ահա Վիգեն Իսահակյանը, բանաստեղծի որդին, կինոյով է զբաղվում»:

Պաստեռնակը ձեռքը մեկնեց ինձ ու ասաց. «Ողջույն, Իսահակյանին գիտեմ, ես շատ եմ սիրում նրան, ժամանակին նրան հրաշալի կերպով թարգմանել է Բլոկը»:

Պաստեռնակն այն տարիներին դեռ հրապարակորեն չէր թարգմանել և տպել հորս գործերը: Սակայն շատ ավելի ուշ՝ բոլորովին վերջերս, իմացանք նրա որդուց՝ Եվգենիից, որ Պաստեռնակը շատ շուտ, զուտ իր համար փորձեր էր կատարել թարգմանելու Իսահակյանին: Եվգենին հոր ձեռագրերի մեջ տեսել ու կարդացել էր:

Պաստեռնակը հարցրեց. «Դուք այժմ Փարիզում եք ապրում»:

«Այո՛, - պատասխանեցի ես, - ժամանակավոր, եկող տարի հորս հետ պիտի վերադառնանք հայրենիք» (Վիգեն Իսահակյան, «Հայրս», Երևան, 2011 թ., էջ 327):

Պաստեռնակն իմանալով, որ Վիգենը լավ գիտե Փարիզը, խնդ-

րում է նրան իրեն ուղեկցել դեպի ռուսական գրադարանը և եկեղեցի, Վիկտոր Հյուգոյի թանգարան և այլն: Հետաքրքրվողները ավելին Պաստեռնակի 1935 թ. փարիզյան օրերի մասին կարող են կարդալ Վիգեն Իսահակյանի «Հայրս» գրքում (էջ 326-336):

Իսահակյանը և Պաստեռնակը հաջորդ անգամ հանդիպում են Մոսկվայում 1941 թվականի հունիսի սկզբին «Հայ գրականության տասնօրյակի» շրջանակում: Հիշում են իրենց հանդիպումները Փարիզում, 1935 թ., երբ Եվրոպայի մտավորականները կարծում էին, թե կարելի է սանձահարել Հիտլերին: 1941 թ. երկուսն էլ, որպես հեռատես ու բարձր ինտուիցիայի տեր մարդիկ, հասկանում էին, որ պատերազմը հիտլերյան Գերմանիայի հետ անխուսափելի է: Եվ նրանց հանդիպումից մեկ ամիս չանցած, բռնկվում է «աշխարհահեղեղ» պատերազմը:

Մոսկվայում Իսահակյանն ու Պաստեռնակն ունեին ընդհանուր բարեկամների մի բարի շրջանակ՝ Մարտիրոս Սարյան, Մարիետա Շահինյան, Հակոբ Խաչատրյանց, Իլյա Էրենբուրգ, Նիկոլայ Տիխոնով, Կոռնեյ Չուկովսկի, Սերգեյ Շերվինսկի, Վերա Չվյագինցևա, Սոֆյա Խիտարովա:

Այդ շրջանում (1941 թ.) Պաստեռնակն արդեն թարգմանել էր Իսահակյանի բանաստեղծությունների շարքը և տպագրել մոսկովյան «Դրուժբա նարոդով» (1940, ?5) և «30 դնեյ» (1940, ?5) ամսագրերում: Ինչպես վկայում է Պաստեռնակին լավ ծանոթ գրականագետ Սոֆյա Խիտարովան (որն աշխատելիս է եղել «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչությունում), բանաստեղծությունների ընտրությունն արել է ինքը՝ Պաստեռնակը: Բնականաբար, Իսահակյանը Պաստեռնակին հայտնել է իր շնորհակալությունը կատարած բարձրարվեստ թարգմանությունների համար:

Այնուհետև Իսահակյանից Պաստեռնակի կատարած թարգմանական շարքը՝ վեց բանաստեղծություն և մեկ հատված «Ալագյազի մանիներից» (որի մեծ մասն, ի դեպ, թարգմանել է Աննա Ախմատովան), ընդգրկվում են Պաստեռնակի երկերի ժողովածուների կազմում և ներառվում ռուս թարգմանական արվեստի «Ոսկե ֆոնդի» մեջ:

Իսահակյանի դասական թարգմանիչներ Ա. Բլոկի և Վ. Բրյուսովի կողքին իր թարգմանություններով հանդես եկավ XX դարի ռուսական պոեզիայի այնպիսի մի հետաքրքիր դեմք, ինչպիսին Բորիս Պաստեռնակն էր:

Պաստեռնակը թարգմանել էր այն բանաստեղծությունները, որոնք հոգեպես մոտ էին իրեն և ինչ-որ չափով արտահայտում էին տվյալ

ժամանակի իր տրամադրություններն ու հույզերը: Դրանք էին՝ «Իմ հոգին տարագիր մի թռչուն...», «Ում սիրտն է հեծում մըռայլ գիշերին...», «Գագաթներին մով սարերի...», «Ես որ մեռնիմ ու իմ վերքից...», «Զարոյի երգը» և այլն:

Մի շարք հանգույցներում Իսահակյանի քնարական հերոսի ապրումներն ու հույզերն արձագանքում էին Պաստեռնակի հոգեկան զգացմունքներին: Դա միայնակ ու վիրավոր մարդու ողբն է, հեծեծանքը «այս ցավի, մահի դաժան աշխարհում», երբ Իսահակյանի հերոսը իրեն ընկեր է կանչում «մըռայլ գիշերի»՝ «մենավոր գայլին». «արի՛, լանք մեկտեղ, իմ խեղճ գայլ-եղբայր»: Դա նաև սիրո ազնիվ զգացմունքի անարձագանք լինելն է, և իրեն (իր բանաստեղծական կերպարը) որևէ ռոմանտիկ խորհրդանիշի տակ ներկայացնելը՝ «Իմ հոգին տարագիր մի թռչուն // Չունի բույն, չունի քուն ու անդորր»:

Այո՛, շատ հատվածներում Պաստեռնակին հարազատ էր Իսահակյանի թե՛ հոգեկան իրավիճակը, թե՛ բանաստեղծական սիմվոլիկան, և Պաստեռնակը թարգմանելու պրոցեսում այս ամենն անցկացնելով իր պոետական քուրայի միջով, ռուսերենով ստեղծում է բանաստեղծական շատ ինքնատիպ մի երևույթ, որը մի կողմից կրում էր Պաստեռնակի սուբյեկտիվության կնիքը և ներծծված էր նրա ստեղծագործական տեմպերամենտովու պատկերներով, մյուս կողմից իր էությանը այն մաքուր ու ճշմարիտ Իսահակյան էր:

Ահա Պաստեռնակի թարգմանությամբ Իսահակյանի «Ում սիրտն է հեծում մըռայլ գիշերին...» բանաստեղծությունը.

У кого так ноет ретивое,
Что в ответ щемит и у меня?
Это волк голодный за горою
Горько воет, кровь мне леденя.

Злая тень на снеговом сугробе,
Я, как ты, устал и одинок.
Волчье сердце, я твое подобье
В этом мире смерти и тревог.

Мы родные братья и подобье
В этом мире горя и обид.
Так проклятье ж всей земной утробе.
Вместе, братец, заскулим навзрыд.

Բնագրի համեմատությամբ այստեղ վերափոխված են մի շարք պատկերներ, որոշ հատվածներում ներկա են պաստեռնակյան ներդրումներ, ոճական սկզբունքներ, որոնց անհրաժեշտությունը բխում է ռուսական պոեզիայի ներքին օրինաչափություններից: Եվ Պաստեռնակը համարձակորեն այս ամենը կիրառում է իր թարգմանության մեջ, ստեղծելով մի երկ, որը եթե բառացիորեն և կամ թե արտաքին ձևով նման չէ Իսահակյանի բնագրին, ապա իր ողջ էությամբ (նաև ներքին հանգով ու տողերի էներգիայով) հայ բանաստեղծի երկի «երկվորյակն» է: Եվ մենք կրկին հավաստում ենք, որ մինչև անգամ այնպիսի մեծ վարպետի մոտ, ինչպիսին Պաստեռնակն էր, բանաստեղծական նվաճումն ստեղծվում է այն դեպքում, երբ բնագիրը համահունչ է թարգմանչի բանաստեղծական ու մարդկային խառնվածքին:

Իսահակյանի բանաստեղծությունների պաստեռնակյան թարգմանությունների շարքը (որն, ի դեպ, դեռ ըստ արժանվույն չի գնահատվել, մինչդեռ ժամանակին այն առաջ է բերել Իլյա Էրենբուրգի հիացմունքը) նոր հորիզոններ է բացում Իսահակյանին ռուսերեն թարգմանելու ասպարեզում: Պաստեռնակն իրավացի կոտակելով, որ Իսահակյանի մոտ էականը հանգավորումը չէ՝ այսպես կոչված բանաստեղծական տեխնիկան, այլ՝ ներքին դիթմը, բանաստեղծական կառույցի համատարած սիմֆոնիզմը, ձգտել է հաղորդել Իսահակյանի երկի ներքին մեղեդին, որն անխզելի ներդաշնակության մեջ է ասելիքի հետ, և նրա հետ միասին կազմում է յուրահատուկ «պոլիֆոնիկ ամբողջականություն»:

Душа - перелетная бедная птица
Со сломанным бурей крылом.
А дождь без конца, и в пути ни крупницы,
И тьма впереди и в былом.

Но где-то, усеявши неба покатошь,
Не ведают звезды беды,
И ты - голубая хрустальная святость
Большой путеводной звезды.

Хоть раз меня взором мирящим порадуй
И верь мне: конец мятежу.
На дне твоего непорочного взгляда
Я сердце свое погружу.

Душа - перелетная бедная птица

Без дома, без сил и без сна.

А дождь без конца, и в пути ни крупницы.

Дорога ночная темна.

Սա նույնն է, ինչ «սեփական պոեզիայի» ստեղծումը. նման արդյունքը հնարավոր չէ առանց ներքին ստեղծագործական շիկացման, առանց ասելիքի համընկնման, երբ բնագրի տողը առաջ է բերում և՛ համախոհություն, և՛ հոգեկան ոգևորություն:

Իսահակյանի 1945 թվականի ժողովածուի աննախադեպ հաջողության մի մասն էլ, Բլոկի և Բրյուսովի գործերի կողքին, բաժին է ընկնում նաև Պաստեռնակի թարգմանություններին:

Իսահակյանի «Ու՛մ սիրտն է հեծում մըռայլ գիշերին...» բանաստեղծությունը, գրված 1907 թ., առանձնանում է խոհական հնարքով, երբ Իսահակյանի քնարական հերոսը, իր ես-ը, իր տրամադրություններն ու ապրումները, հակիրճ ասած՝ հեղինակն իրեն համեմատում է «լեռան լանջերին դառն հեծեծող» գայլի հետ, տեսնելով բազմաթիվ ընդհանրություններ մարդու և գայլի իրավիճակների միջև: Բանաստեղծն գայլին ուղղում է խոսքեր, որոնք ավելի շատ ատելություն են պարունակում ժամանակակից աշխարհի դեմ:

Այս ցավի, մահի դաժան աշխարհում

Մեր բախտը մեկ է՝ անհույս ու թըշվառ,

Իմ սիրտն էլ քեզ պես կյանքն է անհծում,

Արի՛, լանք մեկտեղ, իմ խեղճ գայլ-եղբայր:

Ինչպես ցույց է տալիս Պաստեռնակի թարգմանությունը, այս իրավիճակը շատ հատկանշական է նաև ռուս բանաստեղծին: Անշուշտ, Պաստեռնակն այս թարգմանությունը առաջին հերթին կատարել է իր զգացածի դրդմամբ, սա մեծ պոետների յուրահատուկ փոխկանչ է:

Վարպետորեն է թարգմանում Պաստեռնակը նաև Իսահակյանի փոքր կտավի՝ բանաստեղծություն-խորհրդածությունները, որոնք ունեն ընդգծված փիլիսոփայական ուղղվածություն: Ահա Իսահակյանի երիտասարդ հասակում (1897 թ.) գրած խոստովանությունը.

Անհայտ, անորոշ, անձև տենչերով

Ձգտում է հոգիս հեռու՛, շատ հեռու՛,

Տխուր ու մռայլ, ինչպես մշուշ-ծով,

Խուլ հեծեծում է ավերի վրա,

Եվ ինչպես երազ - և՛ կա, և՛ չկա...

Պաստեռնակին ձանաչող ընթերցողը այս բնագիրը կարդալուց

հետո կարող է ասել, որ այն շատ պաստեռնակյան գործ է: Այն հարազատ է այն աստիճան, որ 50-ամյա թարգմանիչը խոր հոգեհարազատություն է զգացել իր և 22 տարեկան հասակում այս բանաստեղծական գլուխգործոցն ստեղծած պոետի միջև: Ասածս լավագույն ձևով հաստատում է պաստեռնակյան թարգմանությունը.

Глухим, неясным, призрачным порывом

Куда-то рвется существо мое.

Как мелистой ночью моря забытье

Лишь плеском выдает себя тоскливым, -

Душа как сон: то есть, то нет ее.

Յուրաքանչյուր տող, լինելով շատ հարազատ բնագրին, բայց և թարգմանված լեզվում, հնչում է առաջնային գեղեցկությամբ և հնչեղությամբ:

Եվս մի խտացված գլուխգործոց, երբ ութ տողում Իսահակյանն իր ապրած կյանքի անցած ապրումների հակիրճ, բայց խոր գնահատականն է տալիս.

Ապրած իմ կյանքից

Մի սուրբ երազի

Բուրմունքը մնաց

Սրտումս անմոռաց –

Այն որ՝ ջերմ լացի

Առանց տանջանքի,

Խորունկ սիրեցի

Առանց տենչանքի...

Հավատարիմ մնալով բանաստեղծության բուն էությանը, Պաստեռնակը հասնում է արդյունքի՝ առաջին հերթին ոչ թե թարգմանելու, այլ հարազատ լեզվով պոեզիա ստեղծելու սկզբունքին հետևելով: Այս հանգամանքը հստակ երևում է Պաստեռնակի թարգմանությունն ընթերցելիս.

Из жизни всей

Два аромата

С давнейших дней

Доньше святы,

Я ликовал,

От слез шалея,

И обожал

Не возделая.

Սա վառ օրինակ է, երբ բնագիրը թարգմանվում է ոչ թե տառացիորեն, այլ թարգմանվում է միտքը, բանաստեղծությունն ամբողջապես շարժման մեջ է, կարդացվում է մեկ թափով, նույն թափով, ինչ բնագիրը:

Երկուսն էլ իրենց պոեզիայում խոսքի խտացման վարպետներ են: Այս օրինաչափությունը գերազանց երևում է Իսահակյանի պոեզիայի կատարած պաստեռնական գործերն ուսումնասիրելիս:

Հարկ կա անդրադառնալու նաև Պաստեռնակի ևս մի թարգմանության՝ Իսահակյանի «Ալազյազի մանիները» պոեմից «Չարոյի երգը» հատվածին: Թե՛ ողջ պոեմը և թե՛ «Չարոյի երգը», որ գրված է հայկական ժողովրդական պոեզիայի, ավելի շուտ բանահյուսության սկզբունքներով, բոլորովին նոր ասպարեզ է Պաստեռնակի համար: Այստեղ Պաստեռնակն իր համար մի նոր պոետական աշխարհ պիտի բացահայտեր և թարգմանելիս նրան օգնության է գալիս ոուս բանահյուսության գանձարանը: Նա կատարում է իր թարգմանությունը՝ առավելագույն չափով հավատարիմ մնալով բնագրին և անդրադառնալով մի շարք ոճային առանձնահատկությունների, որոնք ավելի բնորոշ էին ոուս բանահյուսությանը:

Եվ արդյունքը փայլուն էր.

Закрылись веки темноты,

И дол и горы сном объаты.

Над головою только ты

Сверкаешь солнцем без заката.

Я чернах глаз читаю цель.

Твой взгляд, играющим агатом

Меня за тридевят земел

Уносит царством тридесатым.

Մինչ Պաստեռնակը ոուս անվանի բանաստեղծներից Իսահակյանին թարգմանել են Իվան Բունինը, Ալեքսանդր Բլոկը, Վալերի Բրյուսովը, Վյաչեսլավ Իվանովը, Կոնստանտին Բալմոնտը: Նույն շրջանում, ինչ Պաստեռնակը, Իսահակյանին անդրադարձել է նաև Աննա Ախմատովան, ավելի ուշ՝ Նիկոլայ Տիխոնովը, Պավել Անտոկոլսկին: Այսպիսով կարելի է ասել, որ Իսահակյանին թարգմանել են համարյա բոլոր խոշոր ոուս բանաստեղծները, որոնք և հիմք են գցել Իսահակյանի հետագա ոուս թարգմանիչների համար:

Այսպես ասած, պաստեռնակյան թարգմանական դպրոցին առա-

վել հարազատ եղավ բանաստեղծուհի Բելլա Ախմատովինան: Եվ դա բնական է, քանզի նա որպես ստեղծագործող շատ մոտ է Պաստեռնակին և ոուս դասական պոեզիայի ավանդներին: 1950-ական թվականների Պաստեռնակին երկրպագող երիտասարդ բանաստեղծների սերնդից՝ Եվտուշենկո, Վոզնեսենսկի, Ռոժդենստովենսկի, Ախմատովինա, մեծ բանաստեղծին ամենամոտը Բելլա Ախմատովինան էր: Մարդկային հարաբերությունների առումով՝ Վոզնեսենսկին, իսկ ստեղծագործական՝ Ախմատովինան: Եվ պատահական չէ, որ 1970-ական թվականների սկզբներին Իսահակյանի հորեյանական հատորի համար Ախմատովինան հսկայական աշխատանք կատարեց, թարգմանելով Իսահակյանի պոետական մի ողջ շարք:

Հատկանշական է նաև այն փաստը, որ երկու մեծ բանաստեղծներն էլ՝ Իսահակյանը և Պաստեռնակը, վեպ են գրել: Իսահակյանը «Ուստա Կարո» վեպը գրել է շուրջ կես դար, 1911 թվականից մինչև կյանքի վերջը: Վարպետն ասում էր. «...Ուստա Կարոն» կավարտվի այն ժամանակ, երբ Հայկական հարցը կստանա իր լուծումը»: Եվ միայն ետմահու տպագրվեց վեպի առաջին տարբերակը, շուրջ 600 էջ: Իսկ Պաստեռնակն ստեղծեց «Դոկտոր Ժիվագոն» տասը տարում՝ 1946-1956 թթ.: Նրանք կարծես յուրովի փորձություն էին բռնում, թե իրենց՝ քնարերգակաների մոտ կստացվի՞ արդյոք հաջողության հասնել վեպի ժանրում: Եվ, իհարկե, նրանց ստեղծած վեպերն առաջին հերթին բանաստեղծի արձակ էին: Եվ նրանք ինչ էլ գրեին, առաջին հերթին բանաստեղծ էին: Երկու բանաստեղծներն էլ իրենց վեպերը համարում էին իրենց կյանքի գլխավոր գործը: «Դոկտոր Ժիվագոն» վեպը հեղինակին ձանաչում բերեց ողջ աշխարհում և որպես դափնեպսակ (որն ավելի շուտ կարելի է անվանել տատասկի ու փշի պսակ)՝ Նոբելյան մրցանակը: Հիշենք, որ բոլոր ժամանակների ոուս հեղինակներից Նոբելյան մրցանակ ստացել էր միայն տարագրությունում ապրող Իվան Բունինը: Կազմակերպված հալածանքները Պաստեռնակին հասցրին հսկայական բարոյական հարված, որի արդյունքը եղավ նրա մահացու հիվանդությունը:

Իսկ Իսահակյանը շարունակում էր գրել «Ուստա Կարոն», սակայն հայ ժողովրդի պատմությունը զարգանում էր այլ հունով, որի լուծումը հեռու էր Իսահակյանի պատկերացումից, ուստիև Վարպետի ձեռքը չէր գնում վերջակետ դնել:

Բնական է, որ նա խորհրդային տարիներին չէր կարող տպագրել իր «կյանքի վեպը», անգամ նրա առաջին տարբերակը: Եվ երկար

տարիներ վեպը համարվում էր անավարտ կամ թե անտիպ: Իհարկե, դրանք շատ տարբեր վեպեր են, սակայն մի բան նրանց ընդհանրացնում է. երկու վեպերի հերոսները՝ Ուստա Կարոն և դոկտոր Յուրի Ժիվագոն հանդիսանում են իրենց ստեղծողների երկվորյակները: Ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը Բորիս Պաստեռնակի երկերի հինգհատորյակի համար գրած իր նախաբանում հետևյալն է ասում. «Մենք պետք է կրկին հավաստենք, որ Պաստեռնակի ստեղծագործությունում պոեզիան և արձակը միասնական են: Նրանք գնում են նույն նավընթացով (հալսով): Բայց ինչ-որ մի պահ նրա ուշ շրջանի ստեղծագործությունում Պաստեռնակը կարծես հրամայում է՝ շրջադարձ դեպի վերջնական պարզություն...: Նա հնարավորություններ է որոնում քնարերգությունից անցնել էպոսի, իսկ պոեզիայից անցնել արձակի: Սակայն նրա էպոսը մնում է քնարական, իսկ արձակը՝ բանաստեղծական»¹:

Նույնը կարելի է ասել և Իսահակյանի վերաբերյալ: Նրա էպոսը («Սասնա Մհեր») քնարական է, իսկ արձակը՝ բանաստեղծական: (Այս թեմայի շուրջ ես հանդես եմ եկել դեռևս 1975 թ. «Բանաստեղծի արձակը» մենագրությունում):

Պաստեռնակը վեպն ավարտում է 25 բանաստեղծությունից կազմված շարքով, որն անվանել է «Յուրի Ժիվագոյի բանաստեղծությունները»: Այս եզրափակիչ բանաստեղծություններն իրականում հանդիսացան Բորիս Պաստեռնակի պոեզիայի «կարապի երգը»: Այս շարքում կան բացառիկ պոետական գլուխգործոցներ՝ «Համլետ», «На страстной», «Зимняя ночь», «Огнотоп», «Բաժանում», «Рождественская звезда», «Гефсиманский сад»: Այս բանաստեղծությունները 20-րդ դարի ռուսական պոեզիայի եզակի գանձերից են և հաստատում են այն ճշմարտությունը, որ նրանց հեղինակը, չնայած արտաքին աշխարհի հալածանքներին, չնայած հսկայական բռնատիրական վարչակարգի դեմ իր միայնակ դիմակայությանը, 20-րդ դարի ռուս ամենամեծ բանաստեղծներից մեկն էր, որ հեռացավ կյանքից ուժերի ծաղկման շրջանում, ասենք նաև, որ հեռացավ ոչ թե պարտվելով, այլ՝ հաղթանակելով: Եվ շարունակում է մնալ ոչ միայն ռուս պոեզիայի, այլև արձակի մեծագույն դեմքերից մեկը:

Տարիներ շարունակ գրչի և ձեռագրերի հետ գործ ունենալով, ես

¹ Борис Пастернак, собр. соч. в пяти т-х, т. 1, Москва, Художественная литература, 1989 г., стр.37.

թարգմանությամբ երբեք չեմ զբաղվել, մեկ անգամ թարգմանել եմ մեկ հատված Վիլյամ Սարոյանի «Հեծանվորդը Բևերիի Հիլսից» հուշվեպից և մեկ բանաստեղծություն Կայսին Կուլիևից՝ «Լուսնի լույսը»:

Եվ ինչպես ասացի, Պաստեռնակի հատորը ձեռքս վերցնելով՝ կարծես մի անհրաժեշտություն զգացի այս դժվարագույն բանաստեղծին փորձել հայերեն խոսեցնել: Հաջողվեց արդյո՞ք, շատ դժվար է միանշանակ պատասխանել, քանզի ես շատ, պարզապես շատ հեռու եմ հանգավորման արվեստից: Բայց Պաստեռնակը ոչ միայն վանկը չէ, այլև մտքի զորությունը, անկանխատեսելի պատկերներ ստեղծելու կարողությունը, ներքին լարումը, բառի ազատությունը, հազար ու մի հնարքով ռուսերեն լեզվի գանձերի բացահայտումը, իր մարդկային էության անմնացորդ նույնացումը իր քնարական կերպարի, հերոսի, իր բանաստեղծության, իր ստեղծած տողի էության հետ: Յուրաքանչյուր հեղինակ սիրելի է դառնում իր ընթերցողին «ստորգետնյա» ներքին հոգեկան կապերի ստեղծման շնորհիվ: Ծատ հաճախ այս կապերը նույնիսկ մնում են անբացատրելի: Դա էլ, ըստ երևույթին, ընթերցողի «հեղինակային իրավունքն» է: Ես թարգմանեցի Պաստեռնակից միայն հինգ բանաստեղծություն, փորձելով առաջին հերթին հնարավորին չափով հարազատ մնալ բառին, ասելիքին, բովանդակությանը: Իսկ ասելիքի զորությունը կարող է գտնել, տեղը գցել ասելիքի ձևը, հագուստը:

Ինձ թվում է, կարևորը Պաստեռնակի միտքը անկորուստ տեղ հասցնելն է: Պաստեռնակը ուրիշ լեզվով (այդ թվում և հայերեն) շատ դժվար է վանկավորվում, հանգը հանգին բերելու դեպքում քանդվում է պատկերի ամբողջականությունը, կորչում է մտքի աշխատանքի հմայքը, և ստիպված պիտի լինես արհեստական բառերով բառը կապես բառի հետ: Եվ կստացվի թույլ, պարզունակ ու միամիտ ոտանավոր: Պաստեռնակը, ինչպես յուրաքանչյուր մեծ պոետ, փայլում, հրաշագործում է իր մայրենի լեզվում, չմտածելով, թե իրեն մի օր թարգմանելու են այլ, օտար լեզվով: Այնպես որ, թող ների ինձ Պաստեռնակը, եթե մի բան այնպես չէ...